ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՌՀ-ՄԱԾՁԲ-26/27»

ք. Երևան «17» օգոստոսի 2026թ.

«Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով»-ը, ի դեմս գլխավոր քարտուղար Սմբատ Խաչատրյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԻՀՐ - ԱԲ պիտակավորման համակարգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լարիսա Գինոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պայմանագրային հիմքերով համակարգային վերլուծության և ծրագրավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պ այմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ, բայց ոչ ավել քան 20 (քսան) օր, և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել ներկայացնել N 1 հավելվածով նախատեսված քանակությամբ տեսալսողական նյութ մինչև յուրաքանչյուր ամսվա 20 (քսանը):

2.3.3 Պատվիրատուից պահանջել տրամադրել տեսալսողական նյութերը N 1 հավելվածով սահմանված ձևաչափով, իսկ չտրամադրելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը:

2.3.4 Հրաժարվել Պայմանագրի կատարումից և միակողմանի լուծել Պայմանագիրը եթե տրամադրված տեսալսողական նյութի ծավալը կամ տեխնիկական չափանիշները չեն համապատասխանում N 1 հավելվածով սահմանված ձևաչափին:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ՝ N 1 հավելվածով նախատեսված ժամանակահատվածի յուրաքանչյուր ամսվա տասին: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պայմանագրով նախատեսված ձևով և N 1 հավելվածով սահմանված ձևաչափով՝ նշելով նաև փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության **2 (երկու)** օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է N 1 հավելվածով նկարագրված պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 (հինգ)** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **285 000 (երկու հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Այս դեպքում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **13 էջից,** կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով	ՄԻՀՐ - ԱԲ պիտակավորման համակարգ
ք. Երևան, Իսահակյան 28	ՍՊԸ ք. Երևան, Ե. Կողբացի 16-63
ՀՀ ՖՆ գործառական վարչություն	Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011057016	Հ/Հ 1930098878893400
ՀՎՀՀ 02556422	ՀՎՀՀ 02945313
Digitally signed by KHACHATRYAN SMBAT 3407710445 Date: 2026.08.17 16:35:51 GMT+04:00	Ստորագրող ԼԱՐԻՍԱ ԳԻՆՈՍՅԱՆ 5701820319 2026.08.14 03:18:38 GMT+04:00 Հավաստագրված է ԷԿԵՆԴ-ի կողմից
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«17» օգոստոսի 2026թ. կնքված
«ՀՌՀ-ՄԱԾՁԲ-26/27» ծածկագրով պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	72241500/1	1. **Ծառայությունները** ներառում են Պատվիրատուի կողմից տրամադրվող (Պատվիրատուի անվանմամբ բացված պահպանման և փոխանցման օգտահաշվից կամ անմիջապես էլեկտրոնային հասցեից info@themihr.ai հասցեին ուղարկված) տեսալսողական նյութի վերլուծություն՝ **MIHR Omni – Guard հարթակի** կիրառմամբ, ինչպես նաև մեկ ու կես ժամ (90 րոպե) տևողությամբ սույն տեխնիկական բնութագրում նկարագրված վերլուծության առարկային վերաբերող հարցերի մեկնաբանություն: 2. **Վերլուծության առարկան.** Վերլուծության ենթակա են Պատվիրատուի կողմից տրամադրված տեսալսողական նյութ (այսուհետ նաև Ֆայլ), ներառյալ՝ -տեսանյութեր, տեսալսողական հաղորդումներ, տեսագրություններ; -ձայնային նյութ, ձայնագրություն; -համակցված տեսալսողական բովանդակություն: 3. **Վերլուծության արդյունքում Պատվիրատուին տրամադրվող զեկույցի (այսուհետ՝ Զեկույց) բովանդակությունը.** Յուրաքանչյուր վերլուծված ֆայլի համար Կատարողը, պարտավոր է Պատվիրատուին տրամադրել Զեկույց, որը պետք է ներառի հետևյալ բաղադրիչները. **3.1. Ընդհանուր գնահատման ցուցանիշներ.** Յուրաքանչյուր զեկույց պետք է պարունակի առնվազն երկու հիմնական ցուցանիշ՝	դրամ	285000	1	ք. Երևան, Իսահակյան 28	Ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվում սույն պայմանագրի կնքման օրվանից մինչև 2026 թվականի նոյեմեմբերի 14-ը

		1. **ԱԲ ներգրավվածության հավանականություն**, որը բնութագրում է այն հավանականությունը, որ բովանդակությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն ստեղծված կամ մանիպուլացված է արհեստական բանականության միջոցով՝ արտահայտված տոկոսային հարաբերակցությամբ և ուղեկցված հստակ տեքստային պարզաբանմամբ: 2. **Իսկության հավանականություն** (Authentic Probability), որը բնութագրում է այն հավանականությունը, որ բովանդակությունը ստեղծված է իրական մարդու կողմից և չունի ԱԲ միջամտություն և արտահայտված է տոկոսային հարաբերակցությամբ: Այս երկու ցուցանիշներն ուղղակիորեն բխում են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք), պահանջներից՝ կապված մակնշման կատեգորիաների հետ ու ծառայում են որպես առաջնային ուղղորդիչ: **3.2. Արհեստական բանականության հատկանիշների հայտնաբերում.** Զեկույցը պետք է ներառի փորձաքննական բնույթի վերլուծություն, մասնավորապես՝ · ԱԲ-ստեղծված ու ԱԲ-մանիպուլացված տեսալսողական բովանդակության հայտնաբերում; · Կադրային փորձաքննական վերլուծություն ու ժամանակագծային պատկերում; · Արագ Ֆուրիե Ձևափոխության (Fast Fourier Transform (FFT) միջոցով բարձր հաճախականության էներգիայի վերլուծություն, հայտնաբերելով՝ 1. ԱԲ գերլուծաչափ ցանցի արտեֆակտներ՝ բնորոշ գեներատիվ ԱԲ գերբարձրացմանը (AI upscale), 2. Թվային տեսողական ֆիլտրի ու սրացման հետքեր; · Ձայնային deepfake-ի ու սինթետիկ ձայնի հայտնաբերում; · Սպեկտրալ ու ազդանշանային մակարդակի ամբողջականության ստուգում; · Մետատվյալների նույնականացում (MD5, C2PA): **3.3. Վերլուծություն ըստ բաղադրիչների.** Զեկույցը պետք է ներառի առանձին գնահատում հետևյալ ուղղություններով. · Տեսողական ԱԲ/սինթետիկ բովանդակության հայտնաբերում; · Կադրային գեներատիվ ԱԲ-ի հայտնաբերում;						

		· ԱԲ-ով ստեղծված ձայնի և ձայնի սինթեզի հայտնաբերում; · Տեսանյութի ԱԲ գեներացման և մանիպուլյացիայի ընդհանուր գնահատում; · FFT / PRNU Skew Analysis՝ շեղման վերլուծություն — սենսորային աղմուկի օրինաչափության ու հաճախականային տիրույթի վերլուծություն; · Audio Matrix — ԱԲ-ստեղծված ձայնի ու ձայնի սինթեզի հայտնաբերում; · Video Matrix — տեսանյութի մակարդակի ԱԲ գեներացման ու մանիպուլյացիայի գնահատում; · Գեներատոր մոդելների (Generator models - diffusion and other models) - հայտնաբերված մոդելների ցուցակ ու մասնակցության տոկոսային հավանակությունը: **3.4 Ժամանակագծային վերլուծություն: Ինտերակտիվ բաղադրիչների վերահսկում.** Յուրաքանչյուր Ձեկույց ներառում է ինտերակտիվ կադրային ժամանակագծի գրաֆիկ, որը տրամադրում է վերլուծական արդյունքների ժամանակային պատկերացում բովանդակության ողջ տևողության ընթացքում: Գրաֆիկը կադրային մակարդակով ներառում է հինգ անկախ կառավարելի շերտեր՝ · Deepfake — Deepfake-ի հայտնաբերման հավանականության ժամանակագիծ; · GenAI — Գեներատիվ ԱԲ-ի հայտնաբերման ժամանակագիծ; · Audio — Ձայնի սինթեզի ու ձայնային մանիպուլյացիայի ժամանակագիծ; · Video — Տեսանյութի ԱԲ գեներացման ու մանիպուլյացիայի ժամանակագիծ ; · FFT / PRNU Skew - սենսորային աղմուկի օրինաչափության ու հաճախականային տիրույթի վերլուծություն: Յուրաքանչյուր շերտ պետք է ունենա հնարավորություն (ըստ պահանջի) ակտիվացվել կամ անջատվել անկախ կերպով: 4. **Ծառայությունների մատուցման ծավալը.** Հանձնաժողովը վերը նշված եղանակով Կատարողին տրամադրում է Ֆայլեր հետևյալ պայմաններով. · ծառայությունների մատուցման ժամկետ՝ 3 (երեք) ամիս,						

		· յուրաքանչյուր ամսվա ընթացքում՝ առավելագույնը 15 (տասնհինգ) ֆայլ, · յուրաքանչյուր ֆայլի առավելագույն տևողություն՝ 5 (հինգ) րոպե, · յուրաքանչյուր ֆայլի առավելագույն ծավալ՝ 100 ՄԲ · յուրաքանչյուր տրամադրվող ֆայլ պետք է ունենա MD5 կամ C2PA · Պատվիրատուի անվանմամբ բացված պահպանման և փոխանցման օգտահաշվում Կատարողին վերլուծության համար տրամադրված յուրաքանչյուր Ֆայլ պետք է ուղեկցվի էլեկտրոնային նամակով, որտեղ նշված կլինեն Ֆայլի անվանումը, ծավալը, տևողությունը և MD5 կամ C2PA: Սույն տվյալները պետք է նշված լինեն նաև Կատարողի կողմից յուրաքանչյուր Ֆայլի վերաբերյալ զեկույցին ուղեկցող նամակում: 5. **Արդյունքի ներկայացման ձևաչափը.** Վերլուծության արդյունքները տրամադրվում են՝ · էլեկտրոնային ձևաչափով՝ secretariate@tvradio.am էլէկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով; · վերլուծական զեկույցի տեսքով; · անհրաժեշտության դեպքում վարչական կամ դատական գործընթացներում հավելյալ տեղեկատվություն և բացվածք տրամադրելու հնարավորությամբ:						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ք. Երևան, Իսահակյան 28 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011057016 ՀՎՀՀ 02556422 --- Digitally signed by KHACHATRYAN SMBAT 3407710445 Date: 2026.08.17 16:37:15 GMT+04:00 (ստորագրություն) Կ.Տ.	ՄԻՀՐ-ԱԲ պիտակավորման համակարգ ՍՊԸ ք. Երևան, Ե. Կողբացի 16-63 Կոնվերսբանկ ՓԲԸ Հ/Հ 1930098878893400 ՀՎՀՀ 02945313 Ստորագրող ԼԱՐԻՍԱ ԳԻՆՈՍՅԱՆ 5701820319 2026-08-14 00:16:16 GMT+04:00 Հաստատված է ԷԻԿԻՊ-ի կողմից --- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«17» օգոստոսի 2026թ. կնքված
«ՀՌՀ-ՄԱԾՁԲ-26/27» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72241500/1	Պայմանագրային հիմքերով համակարգային վերլուծության և ծրագրավորման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	95000	190000	285000	285000	**285000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողով
ք. Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011057016
ՀՎՀՀ 02556422

(ստորագրություն)

Digitally signed by KHACHATRYAN
SMBAT 3407710445
Date: 2026.08.17 16:38:06 GMT+04:00

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՄԻՀՐ-ԱԲ պիտակավորման համակարգ ՍՊԸ ք.
Երևան, Ե. Կողբացի 16-63
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930098878893400
ՀՎՀՀ 02945313
Ստորագրող
ԼԱՐԻՍԱ ԳԻՆՈՍՅԱՆ
5701820319

2026-08-14 03:20:34 GMT+04.00
Հաստատված է ՀԿԵՆՏՀ-ի կողմից

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« 17 » օգոստոսի 2026թ. կնքված
«ՀՌՀ-ՄԱԾՁԲ-26/27» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագրերը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 17 » օգոստոսի 2026թ. կնքված
«ՀՌՀ-ՄԱԾՁԲ-26/27» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« 17 » օգոստոսի 2026թ. կնքված
«ՀՌՀ-ՄԱԾՁԲ-26/27» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.